ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 11.07.2013թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳԲԽ-34/13 բողոքը քննող հանձնաժողովի

ԳԲԽ-34/13 բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով գնումների բողոքարկման խորհրդի անունից, քննելով «Էլդոգար» ՍՊԸ-ի կողմից 21.06.2013թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքը, ինչպես նաև ուսումնասիրելով ԳԲԽ-34/13 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված եզրակացությունը պարզեց.

1. **<u>«Էլդոգար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքով «Էլդոգար» ՍՊԸ-ն հայտնել է, որ մասնակցել է «Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» ՊՈԱԿ-ի կողմից հայտարարված ՀՊՄՀ-ԲԲԱՇՁԲ-13/01 ծածկագրով բաց ընթացակարգին և ճանաչվել հաղթող՝ ինչի մասին ծանուցվել է 10.06.2013թ. թիվ 22/08.1.6-757 գրությամբ, որին կցված է եղել հիշյալ ծածկագրով Պատվիրատուի կողմից 2 օրինակից կնքված պայմանագիրը կից հավելվածներով և որի 2-րդ հավելվածը (աշխատանքների կատարման օրացուցային գրաֆիկ) կազմված է ՀՊՄՀ-ԲԲԱՇՁԲ-13/01 ծածկագրով բաց ընթացակարգի հրավերի հավելված 6-ի 1.3 կետի և 3.2.3 կետի պահանջներին անհամապատասխան:

«Էլդոգար» ՍՊԸ-ն հիմնվելով պայմանագրի նախագծի 1.3 կետի 2-րդ պարբերության վրա շտկել է օրացուցային գրաֆիկում առկա անհամապատասխանությունը, կնքել է պայմանագիրն իր հավելվածներով 2 օրինակ և պայմանագրի կատարման ապահովումն ու

սահմանված ժամկետում 14.06.2013թ. կից գրությամբ՝ օրացուցային գրաֆիկում ընկերության կողմից կատարված փոփոխությունների վերաբերյալ մեկնաբանությունով ներկայացրել Պատվիրատուին:

Պատվիրատուն ս.թ. հունիսի 18-ի թիվ 22/08.1.6-781 գրությամբ մերժել է ընկերության կողմից առաջարկված օրացուցային գրաֆիկը և կրկին առաջարկել է 2 աշխատանքային օրվա ընթացքում կնքել և ստորագրել հրավերի հավելված 6-ի 1.3 կետի և 3.2.3 կետի պահանջներին չհամապատասխանող օրացուցային գրաֆիկ:

«Էլդոգար» ՍՊԸ-ն 19.06.2013թ. գրությունով կրկին պարզաբանել է Պատվիրատուին 2-րդ անգամ ընկերության կողմից կազմված օրացուցային գրաֆիկի և պայմանագրի դրույթների հակասության մասին և առաջարկել է շտկել դրանք, այնուհետ կնքել:

19.06.2013թ. Պատվիրատուի և ընկերության միջև վարվել են օրացուցային գրաֆիկի վերաբերյալ բանավոր բանակցություններ, սակայն դրանք արդյունք չեն տվել:

«Էլդոգար» ՍՊԸ-ն հայտնել է, որ Պատվիրատուի ներկայացուցիչների գործողությունները և կամ անգործությունը, պատասխանները՝ գրավոր, թե բանավոր, թույլ են տալիս ենթադրել, որ առկա է միտում ընկերության համար ստեղծել այնպիսի աշխատանքային պայմաններ և ամրագրել դրանք պարտադրված օրացուցային գրաֆիկով, շնորհիվ ինչի ընկերության կողմից կատարվելիք աշխատանքները կունենան ժամկետների խախտում հենց ստորագրման պահից, իսկ Պատվիրատուի կողմից հախուռն, անհասկանալի և անտրամաբանական ձևով պլանավորված աշխատանքների փուլերը կազդեն աշխատանքների որակի վրա՝ ինչը ընկերությունը չի կարող թույլ տալ:

Ըստ էության Պատվիրատուի կողմից առաջարկված պայմանագրում առկա են այնպիսի փոփոխություններ, որոնք հակասում են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջներին, Պատվիրատուի կողմից կազմված օրացուցային գրաֆիկը հակասում է «ՀՊՄՀ-ԲԸԱՇՁԲ-13/01» ծածկագրով բաց ընթացակարգի հրավերի հավելված 6-ի 1.3 կետի և 3.2.3 կետի պահանջներին և Պատվիրատուն չլինելով շինարարության ոլորտում լիցենզավորված սուբյեկտ առաջարկում է իր օրացուցային գրաֆիկով իրականացնել աշխատանքների անտրամաբանական և անհասկանալի ձևով կազմված փուլերի իրականացման գրաֆիկ:

«Էլդոգար» ՍՊԸ-ն խնդրել է ապահովել «ՀՊՄՀ-ԲԸԱՇՁԲ-13/01» ծածկագրով բաց ընթացակարգի հրավերի հավելված 6-ի 1.3 կետի և 3.2.3 կետի, ինչպես նաև քաղաքաշինության բնագավառում գործող նորմերի պահանջներին համապատասխան

կազմված պայմանագրի և դրա հավելված 2-ի (աշխատանքների կատարման օրացուցային գրաֆիկ) կնքումը Պատվիրատուի կողմից:

2. **<u>«Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» ՊՈԱԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները</u>**.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը 27.06.2013թ. N 04/032-902 գրությամբ դիմել է «Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» ՊՈԱԿ-ին՝ խնդրելով կարծիք տալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 21.06.2013թ. «Էլդոգար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ:

«Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» ՊՈԱԿ-ը 09.07.2013թ. N 22/08.1.6-878 գրությամբ «Էլդոգար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է հետևյալը.

«ՀՊՄՀ-ԲԸԱՇՁԲ-13/01» ծածկագրով բաց ընթացակարգի հավելված 6-ը հանդիսացող N «ՀՊՄՀ-ԲԸԱՇՁԲ-13/1» կապալային աշխատանքների կատարման պետական գնման պայմանագրի 1.3 կետի երկրորդ պարբերությամբ տառացիորեն սահմանված է հետևյալը. «Սույն պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով»: Ըստ այդմ, պատվիրատուն, բացարձակապես չխախտելով թե «Գնումների օրենքի» 33-րդ հոդվածի 4-րդ կետի և թե հրավերի հավելվածը հանդիսացող պայմանագրի դրույթները, ս.թ. հունիսի 10-ի թիվ 22/08.1.6-757 գրությամբ կնքման և ստորագրման համար կապալառուին է ներկայացրել պայմանագրի օրինակները՝ կից հավելվածներով, որոնցից հավելված 2-ն իրենից ներկայացնում է առանձին տեսակի աշխատանքների իրականացման ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված ծավալներն ու դրանց կատարման ժամկետները:

Դրան ի պատասխան, կապալառուն ներկայացրել է իր գրավոր առարկությունները, որպես օրացուցային գրաֆիկ ներկայացնելով ծավալաթերթ-նախահաշվով երեք խոշոր խմբերում խմբավորված աշխատանքների համար իր հայեցողությամբ սահմանված ժամկետները, բնավ հաշվի չառնելով այն հանգամանքը, որ բարձրագույն ուսումնական հաստատություն հանդիսացող Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում պայմանագրի կնքման և աշխատանքների սկսման

պահին (այն է՝ հունիսի 15-16) նորոգման համար նախատեսված տարածքների մեծ մասում դեռևս ընթանում են ուսումնական գործընթացները և ուսումնական ստորաբաժանումների (դեկանատներ, ամբիոններ) աշխատանքը, ինչի համար էլ պատվիրատուն առաջարկել էր կապալառուին աշխատանքներն սկսել ուսումնական և աշխատանքային գործընթացներով չծանրաբեռնված տարածքներում:

Մասամբ ընդունելի համարելով կապալառուի նկատառումները իրականացվող աշխատանքների ժամկետների սահմանման առնչությամբ, պատվիրատուն 18.06.2013թ. թիվ 22/08.1.6-781 գրությամբ կապալառուին կրկին ներկայացրել է աշխատանքների կատարման լրամշակված և փոփոխված օրացուցային գրաֆիկը (որում աշխատանքների կատարման ժամկետները սահմանված են ոչ թե ամիս-ամսաթվերով, այլ պայմանագրի ստորագրման օրվանից՝ օրացուցային օրերով)՝ առաջարկելով կնքել պայմանագիրը 2 աշխատանքային օրվա ընթացքում: Չհամաձայնվելով ներկայացված օրացուցային գրաֆիկին, կապալառուն կրկին, ս.թ. հունիսի 19-ին, ներկայացրել է իր առարկությունները և մեկնաբանությունները պայմանագրի դրույթների առնչությամբ, փորձելով օրացուցային գրաֆիկով նախատեսվող աշխատանքների սկիզբը սահմանել պայմանագրի ստորագրումից 5 աշխատանքային օր հետո (կապակցելով դա պայմանագրի 3.2.3 կետով սահմանված՝ աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք տրամադրելու պատվիրատուի պարտավորության կատարման հետ):

Տվյալ պարագայում կապալառուն հաշվի չի առել պայմանագրի մեկ այլ դրույթի, այն է՝ 1.3 կետի պահանջը, համաձայն որի «...պայմանագրով նախատեսված աշխատանքներն սկսվում են Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո...», իսկ համաձայն պայմանագրի 8.2 կետի «Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից..»:

Ինչ վերաբերում է պայմանագրի 3.2.3 կետին, ապա 5 աշխատանքային օրվա ընթացքում արտահայտությունը բնավ չի նշանակում 5 աշխատանքային օր հետո և ըստ այդմ, պատվիրատուն իր կողմից առաջարկված օրացուցային գրաֆիկում կոնկրետ աշխատանքների սկիզբը սահմանելով պայմանագրի ուժի մեջ մտնելու օրը, ստանձնում է նաև պարտավորություն նույն օրը տրամադրել աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ տարածքները:

Չնայած վերոնշյալ հանգամանքներին և համոզված լինելով, որ պատվիրատուի գործողություններն ամբողջությամբ իրականացվել են թե օրենքի և թե պայմանագրի դրույթներին խստիվ համապատասխան, պատվիրատուն, շահագրգռված լինելով

պայմանագրի ստորագրման և դրանով նախատեսված աշխատանքների շուտափույթ սկսման մեջ, կապալառուին երրորդ անգամ է ներկայացրել օրացուցային գրաֆիկը, որում բոլոր աշխատանքներն ըստ էության ներկայացվել են խոշորացված խմբերով, իրականացման փուլերով և ժամկետներով: Նշված օրացուցային գրաֆիկը ոչ պաշտոնական ձևով համաձայնեցման է ներկայացվել կապալառուին ս.թ. հունիսի 20-ին, սակայն հաշվի առնելով վերջինիս առարկությունները, այն պաշտոնապես կազմվել և ստորագրվել է ս.թ. հունիսի 21-ին և նույնիսկ բազմակի բանավոր ծանուցումներից հետո էլ կապալառուի ներկայացուցիչը չի այցելել պատվիրատուին՝ ծանոթանալու և առձեռն ստանալու այն: Հաշվի առնելով դա, պատվիրատուն ստիպված, ս.թ. հունիսի 24-ին գրությունը՝ կից օրացուցային գրաֆիկով, ուղարկել է կապալառուին փոստի միջոցով:

Հաշվի առնելով այն, որ կապալառուն ավելի քան 10 օր տևած բանակցությունների ընթացքում մշտապես փորձել է պատվիրատուին պարտադրել իր համար նախընտրելի, սակայն պատվիրատուի գործունեության առանձնահատկություններից ելնելով վերջինիս համար անընդունելի օրացուցային գրաֆիկով պայմանագրի ստորագրումը, ինչպես նաև այն, որ նույնիսկ հունիսի վերջին օրերին պայմանագրի ստորագրումից հետո դրանով նախատեսված ժամկետում (60 օրացուցային օր) աշխատանքների իրականացումն ավարտվում է համալսարանում նոր ուսումնական տարվա նախապատրաստական աշխատանքների սկզբից օրեր անց և չցանկանալով վտանգել նոր ուսումնական տարում բուհի ուսումնական և աշխատանքային գործընթացների կազմակերպումը, գնման հանձնաժողովը իր 27.06.2013թ. նիստում կայացրել է որոշում կողմերի անհամաձայնության արդյունքում պայմանագիր չկնքելու հիմքով գնման գործընթացը չկայացած համարելու վերաբերյալ:

«Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» ՊՈԱԿ-ը գտնում է, որ վերջինիս գործողություններն ամբողջությամբ իրականացվել են գնումների ոլորտը կարգավորող օրենսդրության և պայմանագրի դրույթներին խստիվ համապատասխան, իսկ կապալառուի բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

<u>3. ԳԲԽ-34/13 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը.</u>

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը հանձնաժողովին ներկայացրել է իր եզրակացությունը և առաջարկել է «Էլդոգար» ՍՊԸ-ի կողմից 21.06.2013թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքը մերժել:

4. ԳԲԽ-34/13 բողոքի վերաբերյալ էական նշանակություն ունեցող փաստերը, ԳԲԽ-34/13 բողոքը քննող հանձնաժողովի հիմնավորումները և եզրահանգումները.

Հանձնաժողովն ուսումնասիրել է «Էլդոգար» ՍՊԸ-ի (այսուհետև՝ նաև Բողոքաբեր ընկերություն) կողմից 21.06.2013թ. ներկայացված բողոքը, «ՀՊՄՀ-ԲԸԱՇՁԲ-13/01» ծածկագրով բաց ընթացակարգի հրավերը (այսուհետև՝ նաև Հրավեր), «ՀՊՄՀ-ԲԸԱՇՁԲ-13/01» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.06.2013թ. ժամը 12:00-ին կայացած նիստի N 5 արձանագրությունը, «Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» ՊՈԱԿ-ի (այսուհետև՝ նաև Պատվիրատու) Կենտրոնին հասցեագրված 09.07.2013թ. N 22/08.1.6-878 և «Էլդոգար» ՍՊԸ-ին հասցեագրված 10.06.2013թ. N 22/08.1.6-757, 18.06.2013թ. N 22/08.1.6-781 և 21.06.2013թ. N 22/08.1.6-808 գրությունները, ինչպես նաև «Էլդոգար» ՍՊԸ-ի կողմից Պատվիրատուին ներկայացված 14.06.2013թ., 19.06.2013թ. և 28.06.2013թ. գրությունները, «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի եզրակացությունը:

«Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» ՊՈԱԿ-ի կողմից վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՊՄՀ-ԲԸԱՇՁԲ-13/01» ծածկագրով բաց ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ ընկերությունների հայտ է ներկայացրել «Էլդոգար» ՍՊԸ-ն:

Պատվիրատուն 10.06.2013թ. N 22/08.1.6-757 գրությամբ դիմել է «Էլդոգար» ՍՊԸ-ին հայտնելով, որ վերջինս «ՀՊՄՀ-ԲԸԱՇՁԲ–13/01» ծածկագրով բաց ընթացակարգի հաղթող է ճանաչվել և առաջարկել է կնքել պայմանագիր:

«Էլդոգար» ՍՊԸ-ն 14.06.2013թ. գրությամբ ներկայացրել է «ՀՊՄՀ-ԲԸԱՇՁԲ-13/01» («Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» ՊՈԱԿ-ի թիվ 1 և 6 մասնաշենքերի վերանորոգման աշխատանքների) իր կողմից կնքված պայմանագիրը և պայմանագրի կատարման ապահովումը և հայտնել է իր

անհամաձայնությունը՝ Պատվիրատուի կողմից ներկայացված օրացուցային գրաֆիկի վերաբերյալ:

Պատվիրատուն «Էլդոգար» ՍՊԸ-ին 18.06.2013թ. N 22/08.1.6-781 գրությամբ հայտնել է, որ մասամբ ընդունելի է համարում բողոքաբեր ընկերության առաջարկները և ներկայացրել է աշխատանքների կատարման լրամշակված և փոփոխված օրացուցային գրաֆիկը՝ առաջարկելով ստորագրել իրենց կողմից կնքված և ստորագրված պայմանագիրը:

«Էլդոգար» ՍՊԸ-ն 19.06.2013թ. գրությամբ կրկին իր անհամաձայնությունն է հայտնել պայմանագրի օրացուցային գրաֆիկի վերաբերյալ խնդրելով կնքել պայմանագիրը և աշխատանքների իրականացման օրացուցային գրաֆիկը՝ իրենց խմբագրությամբ:

Պատվիրատուն 21.06.2013թ. N 22/08.1.6-808 գրությամբ ներկայացրել է օրացուցային գրաֆիկի իր կողմից ստորագրված և կնքված վերջնական տարբերակը և առաջարկել կնքել այն:

«Էլդոգար» ՍՊԸ-ն 28.06.2013թ. գրությամբ կրկին հայտնել է իր անահամաձայնությունը և տեղեկացրել, որ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին իրենց կողմից բողոք է ներկայացվել:

Կենտրոնում ս.թ. հուլիսի 10-ին ժամը 17:30-ին կազմակեպված բանավոր լսումների ընթացքում «Էլդոգար» ՍՊԸ-ի ներկայացուցիչը պնդեց բողոքով ներկայացված փաստարկները և հայտնեց, որ Պատվիրատուի կողմից «ՀՊՄՀ-ԲԸԱՇՁԲ-13/01» ծածկագրով բաց ընթացակարգի հրավերի անբաժանելի մաս կազմող պայմանագրի նախագծի օրացուցային գրաֆիկը դիտավորյալ կազմվել է այնպես, որպեսզի արհեստական խոչընդոտներ առաջացնի կատարվելիք աշխատանքների ժամանակ, իսկ բողոքը քննող հանձնաժողովի այն հարցին, թե գնումների մասին ՀՀ օրենսդրության ո՞ր իրավանորմն է խախտվել, «Էլդոգար» ՍՊԸ-ի ներկայացուցիչը հայտնեց, որ խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ կետը:

Պատվիրատուն պնդեց 09.07.2013թ. N 22/08.1.6-878 գրությամբ ներկայացված առարկությունները, ինչպես նաև հայտնեց, որ Պատվիրատուն մասամբ ընդունելով բողոքաբեր ընկերության առարկությունները, 24.06.2013թ. գրությամբ բողոքաբեր կազմակերպությանն է ներկայացրել նոր օրացուցային գրաֆիկ, որում բոլոր աշխատանքներն ըստ էության ներկայացվել են խոշորացված խմբերով, իրականացման փուլերով և ժամկետներով:

«Էլդոգար» ՍՊԸ-ի ներկայացուցիչը հայտնեց, որ ծանոթ չէ նոր օրացուցային գրաֆիկին, քանի որ չի ստացել այն, որից հետո բողոքը քննող հանձնաժողովի կողմից բողոքաբեր ընկերությանը ներկայացվեց նոր օրացուցային գրաֆիկը: Գրաֆիկին ծանոթանալուց հետո, բողոքաբեր կազմակերպության ներկայացուցիչը հայտնեց, որ ըստ էության առարկություն չունի և պատրաստ է սկսել շինարարական աշխատանքները և դրանք ավարտին հասցնել 60-օրյա ժամկետի փոխարեն 50-օրյա ժամկետում:

Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնեց, որ նույնիսկ հունիսի վերջին օրերին պայմանագրի ստորագրումից հետո դրանով նախատեսված ժամկետում (60 օրացուցային օր) աշխատանքների իրականացումն ավարտվում է համալսարանում նոր ուսումնական տարվա նախապատրաստական աշխատանքների սկզբից օրեր անց և չցանկանալով վտանգել նոր ուսումնական տարում բուհի ուսումնական և աշխատանքային գործընթացների կազմակերպումը, գնման հանձնաժողովը 27.06.2013թ. որոշում է կայացրել կողմերի անհամաձայնության արդյունքում պայմանագիր չկնքելու պատճառով գնման գործընթացը համարել չկայացած: «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք) 33-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ մինչև նույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված ժամկետի ավարտը, կողմերի համաձայնությամբ, կարող են պայմանագրի նախագծում կատարվել փոփոխություններ, սակայն դրանք չեն կարող հանգեցնել գնման առարկայի բնութագրերի փոփոխմանը, ներառյալ ընտրված մասնակցի առաջարկած գնի ավելացմանը:

Ուսումնասիրելով «ՀՊՄՀ-ԲԸԱՇՁԲ-13/01» ծածկագրով բաց ընթացակարգի հրավերի անբաժանելի մասը կազմող պայմանագրի նախագիծը և Պատվիրատուի 10.06.2013թ. N 22/08.1.6-757 գրությամբ «Էլդոգար» ՍՊԸ-ին ներկայացված պայմանագիրը, գտնում ենք, որ Պատվիրատուի կողմից չի խախտվել Օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված որևէ պահանջ, քանի որ նշված պայմանագրի նախագծում չի կատարվել որևէ փոփոխություն, որը կհանգեցներ գնման առարկայի բնութագրերի փոփոխմանը, ներառյալ ընտրված մասնակցի առաջարկած գնի ավելացմանը:

Բացի այդ, «ՀՊՄՀ-ԲԸԱՇՁԲ-13/01» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.06.2013թ. ժամը 12:00-ին կայացած նիստի N 5 արձանագրությամբ որոշում է կայացվել պայմանագրի ստորագրման վերաբերյալ կողմերի անհամաձայնության հետևանքով պայմանագիր չկնքվելու հիմքով «ՀՊՄՀ-ԲԸԱՇՁԲ-13/01» ծածկագրով բաց ընթացակարգը հայտարարել չկայացած:

Վերոգրյալի հիման վրա և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 5-րդ մասը գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Էլդոգար» ՍՊԸ-ի կողմից 21.06.2013թ. Կենտրոնին ներկայացված բողոքը մերժել:

Գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

Գնումների բողոքարկման խորհրդի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողովի՝

Նախագահ՝ Արման Մնացականյան

Անդամներ՝ Լեռնիկ Խաչատրյան

Լուսինե Ավետիսյան